

## ԼԵԶՈՒ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մարտին Յայդեգերը<sup>1</sup>, լեզվի փիլիսոփայական ընդլայնմանը նվիրված իր գիտական գրույցներից մեկում ("Լեզուն"), որը տպագրվել է "Լեզվի ծանապարհից"<sup>2</sup> ժողովածուում, քննարկելով հանրահայտ դրույթը, թե միայն խոսքն է (=լեզուն) մարդուն օտոտում բնական մարդ լինելու և դրսևորվելու ունակությանը, արծարծելով լեզու հասկացության ողջ բազմարժանդակությունը, բայց և չկամենալով լեզվի էությունը հանգեցնել ընթացիկ կամ հասարակայնորեն կիրառելի ինչ-որ մի գաղափարի՝ կատարում է հույժ կարևոր մի դիտարկում. "...խոսել լեզվի մասին, հավանաբար, էլ ավելի վատ է, քան գրել լռության մասին"<sup>3</sup>: Դա իրոք այդպես է, քանի որ խոսել լեզվի մասին, ապա և լեզվական ինքնության կամ նրա դրսևորումների մասին, նշանակում է առնչվել արարչական բանի (հունարեն՝ λόγος) հետ, որը քրիստոնեական մեկնաբանական մտքի համաձայն՝ նույն ինքը նախահավիտյան Բանն է, և որը իր մարդեղացման ընթացքին կոչվեց Յիսուս Քրիստոս. ըստ այդմ՝ Յովհաննեսի Ավետարանի սկզբում ասվածը՝ "Սկզբից էր Բանը ու Բանն Աստծու մոտ էր և Բանն Աստված էր... Ամեն բան նրանով եղավ և առանց նրա ոչ մի բան չեղավ... Նրանով էր կյանքը..." (Յով. 1-1-4) մեկնաբանաբար առնչվում էր Աստվածաշնչի սկզբի հետ, որտեղ ասվում է՝ "Աստուած ասաց. "Թող լոյս լինի", ու լոյս եղավ" և այլն (Ծննդ. 1.1-31) այսպիսով Ավետարանի Բանը նույնացվում է Ծննդոցի աստվածային հոսքի հետ, թե՛ "Թող լոյս լինի": Սա ի՞նչ է նշանակում. այն, որ խոսել իսկապես խոսքի (=լեզվի) մասին, նշանակում է խոսել Աստծո խոստում պատկերի ու նմանության մասին, որ մարդն է: Մ. Յայդեգերը, մեջբերելով Վիլհեմ Ֆոն Յուներլոտի ասույթը, թե՛ մարդն իբրև խոսող է - մարդ, դրանից մակաբերում է մի բարդ հարցադրում. "Սակայն մնում է մտածել, թե ի՞նչ է նշանակում դա - մարդը"<sup>4</sup>:

Այս հարցադրմանը բախվել են նաև միջնադարյան քրիստոնյա հեղինակները, և հիմնվելով գլխավորապես Ծննդոց գրքի ու, մասնավորապես, Ծննդոցի 2.7-ի վրա՝ "Տեր Աստուած մարդուն ստեղծեց էրկրի հողից, նրա դեմքին<sup>5</sup> կենդանության շունչ փչեց", - մարդուն, մարդ էակին բնորոշել են իբրև մարմնա-

<sup>1</sup> Գերմանացի փիլիսոփա, էկզիստենցիալիզմի հիմնադիրներից (1889-1976): Յիմնական աշխատությունն է՝ "Գոյություն և ժամանակ" (1927):

<sup>2</sup> Unterwegs zur Sprache, Stutgart, 1943:

<sup>3</sup> Նույն տեղում: Տես Գերոզ Թրակի "Բանաստեղծություններ"-ի հայերեն թարգմանության (Երևան, 2007, թրգմ.՝ Յ. Մովսես) հավելվածը, էջ 219:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 218:

<sup>5</sup> Այլ թարգմանություններում՝ "նրա ունեզերի մեջ", "ոնգաց մեջ":

վորի և բանականի հյուսվածք, որը պատրաստվելով հողից և իր մեջ ընդունելով Աստծո շունչը՝ դարձել է մարդ. ընդ որում դա՝ մառող չլինելը, ոչ միայն այն ժամանակ է եղել ու վերջացել՝ իբրև աստվածային գործընթաց, այլև շարունակվում է այսօր և կշարունակվի ապագայում ևս, այնքան ժամանակ, քանի դեռ չի իրականացել Արարչի սկզբնական և բուն մտադրությունը: "Մարդ ստեղծենք<sup>6</sup> մեր պատկերի ու նմանության պես": (Ծնող, 1.26), այսպիսով դա՝ մարդու արարման գործընթացը համաժամանակյա է, ինչպես-և մեկնաբանում է, օրինակ, Ստեփանոս Սյունեցի<sup>7</sup>, վերհանելով Բան-ի իմաստային համաժամանակայնությունը. "Աստծու Սիածին Որդին կոչվում է Բան, որովհետև մեր բոլոր անբանությունները վերացրեց և մեզ բանական դարձրեց"<sup>8</sup>:

Լեզուն (խոսքը) որքան իրական է, որպես ռեալ, օբյեկտիվ իրողություն, նույնքան էլ անիրական է, որպես ոչ նյութական, վերացական և զուտ պայմանական իրողություն: Ուստի և դժվար է խոսել լեզվի մասին, որովհետև այն մի բան է, որի մեջ իրականը դրսևորվում է լեզվանշանային միջոցներով: Այս պարագայում առաջանում է տարածություն՝ անդունդ ռեալ, օբյեկտիվ և սյուրբեկտիվ (մարդն իր զգացմամբ, մտքերով և այլն) իրականությունների և դրանց արտահայտման ձևի (լեզվի=խոսքի) համընկնելիության կամ հավասարաթեքության վերաբերյալ: Հիմնականում նշյալ իրականությունները շատ ավելին են նշանակում, քան թե դրանց ընկալման ու արտահայտման միջոցն է՝ խոսքը: Նախ, ուրեմն "անդունդ" է առաջանում օբյեկտիվ իրականության և դրա սյուրբեկտիվ ընկալման միջև, ապա՝ սյուրբեկտիվ-անհատական ընկալման (նաև զգայման) և վերջինիս լեզվական (=խոսքային) մարմնավորման միջև: Ինչու՞ է առաջանում այդ "անդունդը": դա, բնականաբար, առաջանում է ընկալման կամ զգայման սահմանափակվածությունից, քանի որ վերջինս միշտ փոքր է առաջինից, ուստի և անհամընկնելիության աստիճան՝ մեծ. անշուշտ, այս պարագան նկատի ունեն Մ. Հայդեգերը, երբ գրում էր, թե խոսել լեզվի մասին՝ ինչ-որ տեղ նշանակում է խոսել լռության մասին:

Ի տարբերություն նոր և նորագույն շրջանի էկզիստենցիալիստական, ֆեխիստական կամ այլ ընկալումների, որոնց համար լեզուն մերթ բնորոշվում է "լյդետիկ" (էութենական), մերթ պրագմատիկ, հաղորդակցական նշանակություններով, - քրիստոնյա հեղինակները լեզուն բնորոշել են, տարածական-բարտեզային ընկալման համաձայն՝ իբրև մի վայր, որտեղ գոյությունն ու էությունը հանդիպում և ծուլվում են միմյանց (Թովմա Աքվինացի): Բայց պետք է նկատի ունենալ, որ խոսքն այստեղ էական և ոչ պատահական լեզվի մասին է,

<sup>6</sup> Հոգնակին, ըստ մեկնությունների, ցույց է տալիս, որ արարմանը մասնակցել է Սուրբ երրորդության Անձերից յուրաքանչյուրը՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին:

<sup>7</sup> Սատենագիր, աստվածաբան, մեկնիչ, քարզմանիչ, քերական, երաժիշտ (660/670-735):

<sup>8</sup> Ստեփանոս Սյունեցի, Չորս Ավետարանների համառոտ մեկնությունը, Ս. Էքմիածին, 1997, էջ 142:

ընդ որում էական է համարվում այն լեզուն կամ խոսքը (կամ խոսքի դրսևորումը՝ լեզուն՝ ըստ հոգելեզվաբանական եզրութաբանության), որը կապ ունի Բան-ի հետ և արտահայտում է բանականը: Այս առումով իբրև բանականից, հոգևորից շեղում է դիտվում հենց աստվածաշնչյան իրողությունը՝ բաբելոնյան խառնաշփոթությունը, երբ մեկ ընդհանուր լեզվի կամ խոսվածքի փոխարեն առաջանում են շատերը:

Ավելին, այս բազմալեզվայնությունը մեկնաբանվում է իբրև նահանջ աստվածաշնորհի այն պարզևից, որ տրված էր Ադամին դրախտային վիճակում, դա նրան՝ Ադամին տրված կարողությունն էր՝ անուններ տալու երկրային բոլոր արարածներին (Շենդ, 2.19-20): Անուններ տալու գործընթացը հենց նշանակում է խոսել, որովհետև, խոսելն այլ բան չէ, քան որևէ բան (միտք, զգացմունք) անվանելը կամ նկարագրելը: Անվանումը կամ նկարագրումը տեղի չի ունենում սոսկ անուններ տալով, այլ նաև ստորագրումով, այսինքն կապ հաստատելով անվանակիր արարածի, երևույթի կամ առարկայի և նրանց հատկանիշների կամ գործողությունների հետ: Այս հայեցակերպից քննարկելով հարցը, լեզուն կարելի է անվանել հատկանշելու գործընթաց. էթե խոսքում առկա չէ հատկանշումը, ապա դա էական խոսք չէ, հապա պատահական: Աքվինաց բնորոշումը, թե լեզուն այն միակ վայրն է, ուր գոյությունն ու եությունը հանդիպում են միմյանց, նշանակում է հատկանշականի կայացում, քանի որ գոյության և էության հանդիպումը կայանում է միայն հատկանշականի դրսևորման պարագայում. որտեղ բացակայում է նաև գոյության, կեցության էականությունը: Քանի որ լեզուն, ըստ Աստվածաշնչի (և ըստ Աստվածաշնչի մեկնաբանների) բանական մարդուն ներհատուկ մի բան է՝ տրված Արարչից, ուստի և լեզվափոխությունը նշանակում է այդ տրված կամ շնորհված բանի (խոսքի, լեզվի) փոփոխություն: Այսուհետ Բաբելոնում տեղի ունեցած լեզվական բաժանումը ոչ այլ ինչ էր, քան հոգևոր բաժանում կամ պատակտում, որ տեղի էր ունեցել մարդկանց մեջ: Լեզվի և կրոնի հարցերը հետազոտողները գտնում են<sup>9</sup>, որ Բաբելոնի աշտարակաշինարարները սկսեցին չհասկանալ միմյանց ոչ թե սոսկ լեզվական անջրպետների առաջացման պատճառով, այլ փոխադարձ օտարացման, հոգևոր խորթացման և երկփեղկվածության պատճառով. ահա այս հոգևոր անընկալունակությունն է բուն՝ պատճառը, որի հետևանքը կամ դրսևորումն է փոխադարձ անընդունելի խոսքը կամ անհասկանալի լեզուն:

Բաբելոնյան աշտարակաշինության և լեզվական խառնաշփոթյան մասին աստվածաշնչյան դրվագը համակողմանիորեն դիտարկելիս ի հայտ է գալիս հույժ կարևոր մի հայեցակերպ՝ կապված (խոսքի) և բարոյականության

\* Успенский Б.А., Влияние языка на религиозное сознание. Труды по знаковым системам, вып. 4. Тарту, 1969, ст. 159-168, տես նաև՝ Мечковской И.Б., Язык и религия. Лекции по физиологии и истории религии, Москва, 1998

(բարոյական ըմբռումների) հետ: Ըստ այդմ պարզ է դառնում, որ մինչ լեզվական "այլասերումը" արդեն իսկ տեղի էր ունեցել բաբելոնյան այլասերում, այն, որ մարդիկ արդեն իսկ որոշել էին կառուցել երկնահաս՝ աշտարակ աղյուսով ու ձեթով:

Աղյուսի ու ձեթի օգնությամբ երկինք ձգտող մարդիկ՝ ամբարտավան ու սին ցանկությամբ համակված, - ահա բուն այլասերվածությունը, որը սուրբ Աստված չի հանդուրժում՝ կործանելով այդ աշտարակը և խառնելով լեզուն: (ԾՆՆդ. 11.1-9):

Մովսես խորենացին, վերապատմելով այս դրվագը, կատարում է հույժ հետաքրքրական հավելումներ, որոնք լույս են սփռում վերև ասվածին՝ հավաստելով, որ աստվածաշնչային-քրիստոնեական հայեցակերպի համածայն՝ փոխադարձ կապ կա մարդու բարոյական և լեզվախոսական կատեգորիաների միջև: Նա գրում է. "Ահեղք և երևելիք առաջինքն ի դից, և աշխարհի մեծամեծ բարեաց պատճառք, որ սկիզբն աշխարհի և բազմամարդութան: Եւ ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայինց, անհեղեղք, յաղթանդամք մարմնով և վիթխարի. որք յղացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարակաշինութեանն, և ի նոյն լինէին ի գործ անկեպլք. յոր հողմ ահագին իմն և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ունեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մէջ արկանէին: Յորոց մի էր և Յապետոսբեանն Յայկ, անուանի և քաջ նախարար, կորովածիզ և հաստաղեղն"<sup>10</sup>:

Հատվածում առկա է հսկաների նկարագիրը (որը չկա Աստվածաշնչում). նրանց վիթխարի և անհեթեթ մարմնակազմը՝ իրենց ամբարիշտ մտածումների նման: Նրանց ամբարիշտ խորհուրդը պատժվում է "ահագին" հողմով ու փլուզումներով, որը վերաբերում է նաև հոգևոր փլուզմանը՝ մեկ միասնական և հասկանալի լեզվի կորստյամբ և տարբեր խոսվածքների (բարբառների) առաջնությամբ:

Խորենացիական այս հատվածում առանձնակիորեն շեշտվում է աշտարակաշինության հղացման ամբարտավան ծրագիրը, սակայն զովաբանվում է հայերի նախնի առաջինի Յայկը, որը ընդդիմանում է Նեբրովթին<sup>11</sup>: Խորենացու պատմության այս հատվածը վերլուծելով՝ լեզվի և բարոյականության փոխադարձ կապի վերաբերյալ "Յայկի պատերազմը Բելի դեմ...", անտարակույս, կրում էր կրոնական բնույթ, քանի որ ընդհատման հիմքը և "Արարատ երկրում" Յայկի... "Բնակության տան" կառուցման պատճառն էր Բաբելոնյան աշտարակի կառուցման և իմաստի ընկալման սկզբունքային տարբերությունը: Հազիվ թե

<sup>10</sup> Մովսես Խորենացի, Պատմութիւն Յայոց, Տփղիս, 1913. [աշխատասիր. Մ. Աբեղեան և Ս. Յարութիւնեան], Գիրք առաջին, գլ. Թ. էջ 31-32: Հատվածը Խորենացին բերում է հունագիր մի մատյանից (նույն տեղում, էջ 30)

<sup>11</sup> Խորենացին նույնացնում է նրան Բելի հետ:

արդարացի լինի այն ենթադրությունը, թե շինարարության մասնակիցներից Չայկը միակն էր, որ մերժեց “Նոր մտածելակերպը”: Բաբելոնյան աշտարակի շինարարների թվում կային Չաբեթի և Սեմի ժառանգներ, ինչպես նաև Քամի այլ ժառանգներ ևս, որոնցից շատերը նույնպես պահպանեցին իրենց հավատն առ Աստված՝ հավատ, որը հետո միայն ենթարկվեց փոխակերպումներին<sup>12</sup>:

Փաստորեն, Չայկը և Չաբեթի, Սեմի ու նաև Քամի այն ժառանգները, ովքեր դեմ էին աշտարակաշինության դեկավարի՝ Տիտանյան Բելի բռնությանը<sup>13</sup> (որը փաստորեն եղել է մի նախատիպ՝ անաստված և ամբողջական հասարակարգի)՝ պահպանել են վաղնջական աստվածակենտրոն պաշտամունքը, իսկ ամբարիշտ աշտարակաշինությամբ (=արդի իմաստով, ասենք, կոմունիզմի կառուցմամբ) համակված բելականները հանդես են եկել իբրև նորարարներ՝ աստվածակենտրոն պաշտամունքի փոխարեն առաջարկելով մարդակենտրոն պաշտամունքը՝ այն հասցնելով աստվածապաշտության (ինչպես սոցիալիզմից դեպի կոմունիզմ ընթացող խորհրդային ժողովուրդների պաշտամունքը՝ Լենինի, Ստալինի կամ քաղբյուրոյի նկատմամբ): Ամբարշտության, անօրենության, անբարոյականության և ունայնապաշտության հաստատման հետևանքով այն ժամանակ տեղի ունեցավ բաբելոնական աշտարակի կործանումը և ամբարիշտ գաղափարի շուրջը համախմբված “հսկաների” ցրումը՝ խառնալեզվությամբ. նույնը տեղի ունեցավ Սովետական Միության՝ Նոր Բաբելոնի հետ, որտեղ թեև իշխում էր մի ընդհանուր, պարտադրյալ գաղափարախոսություն, սակայն դա չկասեցորոց, չկարողացավ կասեցնել նրա փլուզումը: Այս համայնական (ճիշտ կլինի ասել՝ կեղծ-համայնական) կյանքը լավ է բնութագրել կոմունիստական գաղափարներով համակված, ապա և դրանցից հիասթափված այնպիսի մի խոշոր բանաստեղծական անհատականություն, ինչպիսին է եղիշե Չարենցը, ով զոհ գնաց այդ նույն աթեիստական գաղափարախոսությունը՝ XX դարի կարմիր Բաբելոնին: Չարենցը 1934-ին գրում էր.

... Չգիտեմ՝ ես եմ եղել մեղավորը, թե մեր

կյանքն է եղել անողոք, ու մոայլ, ու նեո...

.....

Չամայնական էր թեև կյանքը մեզանում,

Ամեն ոք շուրջս սակայն իր թելն էր մանում...<sup>14</sup>

<sup>12</sup> Պապայան Ռ. Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Ս. Էջմիածին, 2002թ. էջ 350:

<sup>13</sup> Թե հատկապես ինչպիսին էր այդ բռնությունը՝ լավագույնս արտահայտված է Սեբեոսի մոտ. “Եւ Բէլն Տիտանեան ի վեր կարծեր զինքն քան զամենայն ազգս մարդկան ի ծառայութիւն իւր կոչէր: Ապա յայնմ ժամանակի Չայկն Աբեթածին ոչ կամեցաւ հնազանդել իր ծառայութիւն Բէլա արքայի. արհամարհեաց գնա աստուած կոչել (Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն”, Երևան, 1939, գլ. Ա, էջ 2):

<sup>14</sup> Չարենց Ե., Պոեմներ: Բանաստեղծություններ, Երևան, 1984, էջ 671

Չարենցյան այս վերջին երկու տողերում հատկապես արտահայտված է բաբելոնյան տիպի կյանքի սկզբունքը, որն ըստ էության այն է, որ համընդհանրության քողի ներքո ամեն ոք "իր թելն է մանում..." սկզբունք, որ բնորոշ է մասնավորապես տոտալիտար վարչակերպերին. հր էգիզմի թելը մանելը երեսպաշտորեն իբրև ազգային կամ համաժողովրդական կյանքին ի սպաս գործունեություն ներկայացնելը՝ ահա Բաբելոնի սկզբունքը և բազմալեզվության ակունքը, բոլորը խոսում են բայց մեկը մյուսին չի հասկանում ըստ էության չի ընդունում ու չի հասկանում: Ահա այս հայեցակերպով մոտենալով լեզվի ըմբռնման հիմնահարցին, հայտնաբերվում է կապը, որ առկա է լեզվի և բարոյականության միջև, հանգամանք, որ բազմիցս շեշտադրվում է Աստվածաշնչի էջերում:

"Նրանք կոկորդ բաց գերեզման է,

իրենք իրենք լեզվով նենգավոր եղան": (Սաղմ. 5.9)

"Իսկ ստախոսների բերանը պիտի պապանծվի": (Սաղմ. 63.11)

"Նրանք հանկարծակի պետք է վիրավորվեն,

իրենք լեզուների պատճառով պետք է վաճարվեն": (Սաղմ. 64.7-8)

"Որպեսզի ես չմեղանչեմ իմ լեզվով": (Սաղմ. 39.1-2)<sup>15</sup>

"Ամբարտավան աչքեր, ստախոս լեզու..." (Առ. 6.17)

"Խաղաղասեր լեզուն կենաց ծառ է,

բայց խռովարար լեզուն սիրտ կը կոտրե": (Առ. 15.4)

"Քո խոսքով պիտի արդարանաս և քո խոսքերով պիտի դատապարտվես": (Մաթ. 12.37)

"Լեզուն էլ մի կրակ է, անհրավության տիեզերք": (Հակ. 3.6)

Կարել է շարունակել և բերել էլի բազում օրինակներ, որոնք վերստին մատնանշում են լեզվի և բարոյականության սերտ կապը՝ լեզվական ապականությունը (խոսքով մեղանչելը) բերում է հոգևոր սպասարկման և հակառակը՝ հոգևոր անկունը բերում է խոսքալեզվային մակարդակի անցմանը, նման դեպքերում լեզուն դառնում է տգեղ, անիմաստ, հայիոյախառն (=մեղանչական), ունայն: Առաջանում են տարբեր լեզվախոսական ձևեր՝ նույն լեզվի ընդերքում. քրեածին տարրերի լեզու, այլասերվածների ծածկալեզու, նույնիսկ՝ ցածրակարգ գրականություն (պոեզիա, պրոզա) լեզու, որն անարգանք է հասցնում և՛ հեղինակին և՛ ընթերցողին: Տեղի է ունենում այն, ինչ տեղի է ունեցել Բաբելոնում՝ նախնական (=աստվածաշնորհ) լեզվի, խոսվածքի և խոսելակերպի կորուստ և նորագյուտ լեզվախոսությունների առաջացում, որը պատնեշավորում է միջանձնային փոխհարաբերությունները, ստեղծում դատարկ տարածու-

<sup>15</sup> Տես Աստվածաշունչ... [Հրամանը Տ.Տ. Վազգենի Առաջնոյ...], Մոսկվա, 1994: Բոլոր մեջբերումները՝ նշյալ հրատարակությունից:

բյուճներ (անընթացակաճություն) մարդկանց տարբեր խմբերի, անհատների և ազգերի միջև:

Այսօր, XXI դարի սկզբին բոլորն կամա թե ակամա ականատես ենք և մասնակի արդի բաբելոնյան լեզվաշփոթությանը և լեզվախոսական բարոյականության անկմանը, այսպես կոչված "լեզվական սուռոզատին" կազմված միջազգային կեղծ-միջուրիմյան պաթվաստումներով: Եթևոլեզվաբանական վերլուծությունները ցույց են տալիս, որ, օրինակ, արդի հայկական իրականությունում առկա է անզլերենի դիսկուրսը՝ լեզվահաղորդակցությունը, օտար լեզուն իր դրական ու բացասական ներազդումներով բնակչության խոսվածքի և ընդհանրապես հայերենի վրա՝ նրա կիրառության տարբեր ոլորտներում (պաշտոնական, գիտական, տնտեսագիտական, բանկային, մշակութային և ընդհանուր խոսակցականում ու շուկայական հարաբերություններում): Դրականն այն է, որ հայերենը անզլերենի (ինչպես նաև ռուսերենի) ներազդեցության շնորհիվ ձեռք է բերում ներ եզրույթներ ու արտահայտչակերպեր, հարստանում ռճական և իմաստային նրբերանգներով, այսպիսով ժամանակակից հային փոխանցելով անզլիական (=եվրոպական և ամերիկյան) տնտեսագիտական գիտական, մշակութային բնագավառների ձեռքբերումները: Սա պետք է անվանել օգտակար լեզվահաղորդակցություն: Սակայն առկա է նաև անզլերենի հետ լեզվահաղորդակցության բացասականությունը, երբ լիակատար կերպով չյուրացված անզլերենից անհաջող, թերի պատճենումներ են արվում, որոնք աղճատում են հայերենը. մինչդեռ հնախավոր էր սեփական՝ հայերեն և օտար՝ անզլերեն լեզուների (=լեզվական այդ երկու ինքնությունների) խորը ճանաչման դեպքում ստանալ կատարյալ թարգմանություններ՝ ինչպես անզլերենից հայերեն, այնպես էլ հայերենից անզլերեն: Խոսքը վերաբերվում է թե՛ գեղարվեստական ու գիտական գրականության, թե՛ պաշտոնական գրագրությանը, թե՛ շուկայական փոխհարաբերությունների, թե՛ զովագրատուների, թե՛ այլ ոլորտների եզրութաբանությանը և լեզվառճական պատճենումներին, թե՛ առհասարակ թարգմանությունների լիարժեքությանը կամ համարժեքությանը:

Նշյալ հարցերը քննարկելիս վերստին բախվում ենք այնպիսի մի հիմնարար խնդրի, ինչպիսին է լեզվի և բարոյականության փոխհարաբերությունը, այսպես ասած՝ լեզվական բարոյականությունը, որն, ի դեպ, հաճախ է խախտվում հատկապես այսօր՝ հայկական միջավայրում: Նշենք այդ խախտման որոշ դեպքեր.

1. Քաղաքական կենցաղում շրջանառվող՝ անզլերեն բառերն ու արտահայտությունները, որոնց կիրառումը պայմանավորված է ոչ այնքան անզլերեն լեզվի յուրացմամբ, որքան անզլո-ամերիկյան օրենտացիային պատկանելն ի ցույց դնելու քաղքենիական մկրտումներով: Ընդ որում նշված "օրենտացիան" այստեղ ոչ մի "մեղք" չունի, բուն "մեղանշականությունը" թաքցված է խոսող-

ների ցուցադրական հոգեբանության մեջ: Չավեչտականն այս պարագայում այն է, որ խոսողները ազգային ինքնության գիտակցման և լեզվամտածողության ցածր մակարդակի պատճառով, ոչ այն է կատարյալ հայախոսներ են մնացել, ոչ էլ անգլիախոսներ են դարձել՝ անգլերենի թերի յուրացման հետևանքով:

2. Անհարկի կիրառվող անգլերեն անվանումները՝ ՀՀ տարածքում և հատկապես Երևանում: Խոսքը վերաբերվում է սրճարանների, ռեստորանների, տարբեր խանութների անվանումներին՝ Central Stherlock Holmes, Yum Yum, Square one, Pizza Hut, Tea House, Victoria's SECRET (որն, ընդ որում, սպիտակեղենի խանութ է) և այլն, և այլն: Հարկ է ճիշտ ընկալել ասվածը՝ ոչ թե չի կարելի անգլերենով կոչել (անվանել) այն կամ այն օբյեկտը, այլ անվանման հարցում պետք է լինի պատճառականություն և համապատասխանություն և ոչ թե , այսպես ասած, թող ներվի ասել՝ "անգլերենի անհարկի ցփնում":

3. Մյուս՝ հույժ կարևոր ոլորտը, ինչպես նշվեց, թարգմանություններն են՝ անգլերենից հայերեն. այս պարագայում բազմաճյուղ է անգլերենին և հայերենին հասցված "վիրավորանքը": Ակնհայտ են անգլերեն արտահայտությունների և լեզվամտածողության թույլ և թույլ ըմբռնումները և դրա հետևանքով, անկապակից, անզույն ոճական յուրահատկություններից զերծ թարգմանությունները՝ "հայերեն":

Ցանկը, որ վերաբերում է լեզվական բարոյականության խնդիրներին, կարելի է շարունակել, բայց դա պահանջում է առավել ընդգրկուն և տևական հետազոտական աշխատանքներ, ինչպես նաև լեզվամտածողական ու բարոյական բարձր չափանիշներ:

### Օգտագործված գրականություն

1. Ստեփանոս Սյունեցի, Չորս Ավետարանների համառոտ մեկնություն, Ս. Էջմիածին, 1997:
2. Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, վերահրատարակված՝ Եր., 1991:
3. Քրիստոնյան Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002:
4. Հավատո հանգանակ. Դավանանք Հայ Եղեղեցւոյ, պատրաստեց Շաքե արք. Աճեմյանը, Ս. Էջմիածին, 2001:
5. Բայրոն: Էջեր նամակներից [Ներած. խոսք. թրգմ. և ձևթղթ.՝ Ա. Բեքարյանի], Եր., 1986:
6. Ինքնություն [հոդվ. ժող.], Երևան, 1995:
7. Գեորգ Թրակը, բանաստեղծություններ [թրգմ.՝ Գ. Սովսթխ], Երևան, 2007:
8. Կրոն և հասարակություն, N1, 2007, Երևան, 2007:
9. Աստվածաշունչ մատեն... Ս. Էջմիածին, 1994:
10. Չարենց Ե., Պոեմներ: Բանաստեղծություններ [կազմ.՝ Գ. Գ. Անանյան], Երևան 1984:
11. Պապյան Ռ., Արդի իրավունքի քրիստոնեական ակունքները, Ս. Էջմիածին, 2002:
12. Вильгельм фон Гумбольдт, Язык и философия культуры, Москва, 1986:
13. Успенский Б.А., Влияние языка на религиозной сознание... Тарту, 1969:
14. Rogier J., The Hyman Semantic Potential, Massachusetts, 1996.